# 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

## ԱԽԱԼՑԻԽԵԻ ԴՊՐՈՑԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՈՒՐԱԽԱՑՆԵԼ ԻՐ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ՄԵԾ ԹՎՈՎ

Սուսաննա Հակոբովա

***Ուսումնական մեկնարկն այս տարի արտասովոր է ու շնորհավորանքին հաջորդող բարեմաղթանքն անմիջապես՝ առողջությունը: Մեր առողջությունն այս պահին ապահովում է բոլորի առողջությունը, ուստի հետեւողական լինենք ինքներս մեր հանդեպ, խնայելով մեզ շրջապատող ծանոթ-անծանոթի: Առողջ լինենք, մեր երեխաների ուսումնական տարին անխափան եւ ուսումնառատ դարձնելու համար: Այդ գիտակցմամբ էլ հնչեցրեցինք 2020/21 ուսումնական տարվա մեր Առաջին զանգը:***

Ախալցիխեի թիվ 3 հանրային դպրոցում լիարժեք ապահովված են սանիտարահիգիենիկ բոլոր պայմանները: Չնայած, որ մեր մեծ ընտանիքում ուսանում է 616 աշակերտ եւ դասարանները մեծաթիվ են, ապահովել ենք անհրաժեշտ հեռավորությունն ու Վրաստանի կրթության նախարարության կողմից տրվող բոլոր հանձնարարականները՝ տարին սկսելով հիբրիդային ձեւաչափով՝ դասարաններում եւ հեռավար:

Առաջին դասարանցիներն այս տարի քառասուներեքն են: Միգուցե դպրոցի առաջին օրը դպրոցում փոքրիկների համար այդքան էլ տպավորիչ չէր, բայց առջեւում են բոլոր տասներկու տարիները, ուստի տխրելու կամ հուսահատվելու կարիք չկա: Համոզված եմ, գիշերվան հաջորդելու է առավոտը, եւ այս սահմանափակումները հենց լուսավոր օրերի նախապայմանն են լինելու:

Ինչպես մյուս, այնպես էլ մեր դպրոցում համավարակով պայմանավորված չտոնվեց Վերջին զանգը, թեեւ տարին փակեցինք հաջողությամբ: Երեսունինը շրջանավարտներից երեքն ընդունվել են Հայաստանի, քսանը՝ Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններ, այստեղից ինը՝ Մերուժան Թադեւոսյանը, Հռիփսիմե Եգյանը, Անժելա Գրիգորյանը, Լարիսա Առաքելյանը, Մարգարիտա Տոնոյանը, Լեւոն Պետրոսյանը, Անժելա Ոսկանյանը, Սերգեյ Մուրադյանը, Սուսաննա Գրիգորյանը լիարժեք պետական դրամաշնորհով: Ունենք ինը մեդալակիր՝ յոթը ոսկե, երկուսն՝ արծաթե:

Ուրախությամբ ասեմ նաեւ, որ մեր դպրոցի տասը աշակերտ գերազանց առաջադիմության համար ստացել են համակարգիչ՝ «Իմ առաջին համակարգիչը» ծրագրի շրջանակներում:

Այս պահին դպրոցում սովորում է հիսունվեց տասներկուերորդ դասարանցի, հույս ունեմ, որ մինչեւ ուսումնական տարվա ավարտ, ինչպես մեր երկրում, այնպես էլ՝ ամբողջ աշխարհում համավարակը հաղթահարված կլինի, եւ մենք մեծ շուքով կճանապարհենք նրանց դեպի կյանքի նոր փուլ:

Մեկ անգամ եւս շնորհավորում եմ, բարի ընթացք բոլորիս:

***ՍՈՒՍԱՆՆԱ ՀԱԿՈԲՈՎԱ***
***Ախացիխեի #3 հանրային դպրոցի տնօրեն***

## ԴԱՄԱԼԱ. 12 ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻՑ 9-Ը ԴԱՐՁԱՎ ՈՒՍԱՆՈՂ

Նելլի Դուդուկչյան

***Սիրելի՛ դպրոցականներ, ուսանողներ, մանկավարժներ, կրթության բնագավառի ներկայացուցիչներ, շնորհավորում եմ ձեզ՝ նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ:***

Այս օրը հիշարժան է բոլոր աշակերտների, նամանավանդ առաջին դասարանցիների համար, ովքեր իրենց ուսուցիչների ուղեկցությամբ առաջին անգամ մտնում են դպրոց՝ զարմանահրաշ մի աշխարհ, որը տարիների ընթացքում կդառնա նրանց համար անչափ հոգեհարազատ, սիրելի ու անմոռանալի մի վայր:

17 ժիր եւ աշխույժ մանուկներ առաջին անգամ ոտք դրեցին դպրոց, որտեղ նրանց սիրով եւ հոգատարությամբ սպասում էր տարրական դասարանների դասվար՝ Արմինե Տոնականյանը:

Նոր ուսումնական տարին թող լինի առավել հագեցած եւ արդյունավետ, քանզի որակյալ կրթությունը մեր ժողովրդի կյանքում միշտ եղել է գերակա նպատակ: Դամալայի հանրային դպրոցը կյանք է ճանապարհել բազում սերունդներ, ոսկե եւ արծաթե մեդալակիր շրջանավարտներ: Այս տարվա շրջանավարտ Թագուհի Սահակյանը, իր բարձր առաջադիմության համար, արժանացել է ոսկե, իսկ Աղավնի Նահապետյանը՝ արծաթե մեդալի: Այս տարվա 12 շրջանավարտներից 9-ն ընդունվել են Վրաստանի տարբեր բուհեր, որոնցից 4-ը՝ Թագուհի Սահակյանը, Աղավնի Նահապետյանը, Գրիշա Բալոյանը, Կարապետ Գրիգորյանը բարձր միավորներ հավաքելով ընդունվել են անվճար:

Նրանց մաղթում եմ նորանոր հաջողություններ ու ձեռքբերումներ ուսման բնագավառում:

Երախտիքի խոսք եմ ուզում հղել շրջանավարտների առաջին դասարանի դասվար, վաստակաշատ ուսուցչուհի Ծովինար Ֆարմանյանին՝ իր տքնաջան աշխատանքի, սերունդների դաստիարակության ձեւավորման գործում: Շնորհակալություն եմ հայտնում դասղեկ Կատին Արեստակյանին՝ դժվարին գործը ստանձնելու համար:

Իմ շնորհակալությունն եմ ուզում հղել Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությանը, Ասպինձայի ռեսուրս-կենտրոնի վարիչ պարոն Տրիստան Մուրադաշվիլուն, աշխատակազմին՝ աշակերտների որակյալ կրթության մշտապես հոգ տանելու եւ գեղեցիկ ուսումնական միջավայր ստեղծելու, աշակերտներին անվճար ուսումնական դասագրքերով ապահովելու, առաջին դասարանցիներին նոութբուքեր նվիրելու համար:

Ասպինձայի ռեսուրս-կենտրոնի վարիչ պարոն Տրիստան Մուրադաշվիլին, Ասպինձայի մունիցիպալիտետի Մերի պարոն Ռոստոմ Մագրաքվելիձեն, սակրեբուլոյի նախագահ պարոն Մամուկա Մելիքիձեն, Դամալա գյուղի պատգամավոր պարոն Էմին Բալոյանը, գյուղապետ պարոն Մարտին Կերեկցյանը, նոր ուսումնական տարվա կապակցությամբ, շնորհավորեցին բոլոր աշակերտներին, իսկ առաջին դասարանի աշակերտներին Ռոստոմ Մագրաքվելիձեն նվիրեց վրաց լեզվի «Այբուբեն»:

Նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ, ուզում եմ շնորհավորել նաեւ «Վրաստան» թերթի անձնակազմին՝ մաղթելով նրանց ստեղծագործական ներուժ ու եռանդ: Եվ շնորհակալություն հայտնել թերթի առաքման համար:

***Նելլի Դուդուկչյան***
***Ասպինձայի մունիցիպալիտետի Դամալայի հանրային դպրոցի տնօրեն***

## ՂՈՒՇՉԻԻ ԴՊՐՈՑՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

***Սեպտեմբերի 15-ին, պահպանելով սոցիալական հեռավորության հանձնարարականն ու դիմակ կրելու պարտադիր պայմանը, Ծալկայի մունիցիպալիտետի Ղուշչի գյուղի հանրային դպրոցը բացեց իր դռները դպրոցականների առջեւ:***

Ալլա Մեհրաբյան

Փորձեցինք քիչ թե շատ տոնական տրամադրություն ապահովել: Մեր դպրոցի շենքը մեծ է, աշակերտները սակավաթիվ, ինչը հնարավորություն տվեց բակում ընդունել ոչ միայն նորեկ յոթ առաջին դասարանցիներին, այլեւ նրանց ծնողներին: Անցած տարի, գյուղում այդ տարիքի երեխաների բացակայության պատճառով չբացվեց առաջին դասարան եւ, ահա այս տարի նորի կազմավորումն արդեն իսկ մեծ ուրախություն էր բոլորիս համար:

Նախկինում Ղուշչիի հանրային դպրոցը շրջանում առաջիններից էր, որտեղ սովորում էին նաեւ հարեւան հայաբնակ գյուղերի աշակերտները: Բայց ժամանակի ընթացքում պատկերը փոխվեց, եւ այժմ աշակերտների ընդհանուր թիվն ընդամենը 46 է: Անցած ուստարին ավարտեց 4 շրջանավարտ, նրանցից մեկը՝ ոսկե մեդալով եւ այժմ արդեն Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատության ուսանող դառնալով՝ 100 տոկոսանոց դրամաշնորհով:

Ղուշչիի դպրոցն ամբողջովին վերանորոգված է եւ ունի անհրաժեշտ բոլոր պայմանները: Գործադրեցինք մեծ ջանքեր եւ նախապատրաստեցինք դասասենյակները, միջանցքները, ուսուցչանոցը, իհարկե, հետեւելով համավարակով պայմանավորված կանոնակարգին: Բոլոր դասասենյակներն ապահովված են ախտահանիչ նյութերով, իսկ օրվա ընթացքում պարտադիր օդափոխվում են: Այդ խստությամբ էլ շարունակելու ենք մինչեւ վարակի նահանջը, առաջնային համարելով մեր երեխաների ու մանկավարժների առողջությունը:

Աշակերտները եւ աշխատակազմը դպրոց մտան միայն ջերմաչափում եւ ախտահանում անցնելուց հետո: Աշակերտներին ու մանկավարժներին ողջունեցի այցելելով դասարաններ, քաջալերեցի նրանց եւ ուսման կարեւորության հերթական հորդորը փոխանցեցի, անշուշտ, եւս մեկ անգամ ծանոթացնելով համավարակով պայմանավորված եւ այսուհետեւ դպրոցում հաստատված կարգուկանոնին:

Կրթաջախը կադրերի պակաս չունի, նրանցից վեցն ավագ ուսուցչի կարգավիճակ ունեն: Խնդիրը միայն հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչների որակավորման բարձրացման մեջ է, քանի որ համապատասխան առարկայական քննություն չկա: Ու թեեւ հարցը բարձրացված է, դեռ լուծում չի տրված:

Ինչեւէ, տարին մեկնարկել է, եւ այն առավել պատասխանատվություն է կրում իր մեջ, քան նախորդները, շնորհավորում եմ բոլորիս: Թող որ մեկնարկող նորը ուսումնառատ լինի, անխափան եւ ուրախությամբ պսակվող:

***ԱԼԼԱ ՄԵՀՐԱԲՅԱՆ***
***Ղուշչիի հանրային դպրոցի տնօրեն***

## ...ԱՅՍՈՒՀԵՏԵՎ ԿԽՈՍԵՆՔ ՆԱԵՎ ԲԱԼԱՆԹԱՅԻ ԵՎ ՃԻԽԱՐՈՒԼԱՅԻ ՄԱՍԻՆ

Նինո Սվանիձե

***«Վրաստանը» հնարավորինս փորձում է հասանելի դառնալ Վրաստանի բոլոր հայաբնակ գյուղերին: Ու նույնիսկ մեր երկրի մամուլի պատմության հետխորհրդային շրջանում, երբ մայրաքաղաքում լույս տեսնող պարբերականները վաճառվում էին միայն թբիլիսյան կրպակներում, «Վրաստանը», շնորհիվ բաժանորդագրության ծառայության իր անձնուրաց ղեկավար, լուսահոգի Անահիտ Բոստանջյանի, հասնում էր մեր երկրի ամենադժվարանցանելի հայաբնակ գյուղեր: Հետեւաբար խոսում նաեւ այդ գյուղերի մարդկանց ու կարեւոր իրադարձությունների մասին:***

Իր գրեթե հարյուրամյա պատմության մեջ «Վրաստան» թերթը, ցավոք երբեք չի անդրադարձել Բալանթային եւ կամ Ճիխարուլային ու առավելեւս տարածվել Բորժոմիի մունիցիպալիտետում գտնվող այս երկու հայաբնակ գյուղերում, այնինչ երկուսի հայ բնակչությունն էլ ոչ միայն փայլուն տիրապետում է վրացերենին, այլեւ հաճախում է տեղում գործող հայկական դպրոցներ: Ճիխարուլայի դպրոցում սովորում են մինչեւ չորրորդ, ուսումը շարունակելով Բալանթայի բազային դպրոցում մինչեւ 12-րդ դասարանը ներառյալ: Ճիխարուլան գտնվում է Տաբածղուրի լճի ափին գտնվող Մոլիթի գյուղից 4 կմ հեռավորությամբ, Ախալքալաքի տանող ճանապարհին, իսկ Բալանթան Ճիխարուլայից մոտավորապես 1 կմ հեռավորությամբ: Սա միայն աշխարհագրական տվյալներ են, թեեւ գյուղի մասին այլ հետաքրքիր ասելիք էլ կա, որից առաջինը երեւի թե դպրոցն է:

Ուստի ուսումնական տարեսկզբի մեր ամենամյա անդրադարձն այս անգամ համալրել ենք նաեւ Բալանթայից եւ նրա մասնաճյուղ հանդիսացող Ճիխարուլայի դպրոցական լուրերով: Զրուցել ենք դպրոցի, ծնունդով թբիլիսցի Նինո Վասաձեի, որն ընդամենը 31 տարեկան է, բայց արդեն վեց տարի ղեկավարում է դպրոցը:

- Բորժոմիի մունիցիպալիտետի Բալանթայի դպրոցը երկբաժին է՝ վրացական եւ հայկական,- «Վրաստանի» հետ զրույցում ասաց Նինո Վասաձեն:- Այս պահին դպրոցում, ընդհանուր առմամբ, սովորում է 63 աշակերտ: Անցած ուսումնական տարում ունեինք 5 շրջանավարտ, որից երկուսը իրենց ուսումը շարունակելու են մեկը՝ Վրաստանի, մյուսը՝ Հայաստանի բուհերում: Նույն թվով առաջին դասարանցիներ ունենք: Նրանցից երկուսը հայկական, երեքը՝ վրացական բաժիններում: Ինչ վերաբերում է դպրոցի ենթակառուցվածքին, ապա ունենք վերանորոգված սպորտդահլիճ իր սանհանգույցով, տաք ջրով ու հանդերձարանով: Շենքը հին է, կառուցվել է անցյալ դարի 60-ականներին եւ այսօր ենթակա չէ հիմնանորոգման, ուստի հույս ունենք, որ, տեղի իշխանությունների աջակցությամբ, մոտ ժամանակներում կմեկնարկի նոր դպրոցի կառուցումը:

- Ուրախությամբ ասեմ, որ մեր դպրոցը միջմշակութային միջավայր է: Ունեցել ենք եւ շարունակում ենք իրականացնել համատեղ ծրագրեր՝ դպրոցի երկու բաժինների մասնակցությամբ: Որպես մանկավարժ մի քանի միջազգային ծրագրեր եմ իրականացրել մեր երկրում գործող եվրոպական կազմակերպությունների հետ: Իմ աշակերտները շատ լավ են տիրապետում ժամանակակից տեխնոլոգիաներին: Ունենք պատրաստած մի քանի ծրագրերի բլոգներ: Դպրոցն իր ֆեյսբուքյան էջն ունի, որը պարբերաբար թարմացվում է դպրոցական նորություններով եւ ուսումնական ակտիվներով: Մենք մեկ միասնության մեջ փորձում ենք առավելագույնս նվազեցնել այն հեռավորությունը, որը բաժանում է մեզ քաղաքից, համոզված լինելով, որ կոտրելու ենք այն կարծրատիպն՝ իբր գյուղում որակյալ կրթություն անհնար է ստանալ:

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ». ԸՆՏՐԱՀԱՄԱՐԸ՝ 41

# ԿԱԽԱ ԿԱԽԻՇՎԻԼԻՆ ՀԱՆԴԻՊԵՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀԵՏ

«Վրացական երազանք» կուսակցությունից Իսանիի ընտրատարածքից մեծամասնական պատգամավորության թեկնածու Կախա Կախիշվիլին, Վրաստանի կրթության նախարար Միխեիլ Չխենկելու եւ Թբիլիսիի մանկապարտեզների կառավարման գործակալության ղեկավար Կախա Վանցելաձեի հետ միասին, հանդիպում ունեցավ հանրային դպրոցների տնօրենների եւ մանկապարտեզների ղեկավարների հետ: Հատկանշական էր, որ սույն հանդիպման նախաձեռնողները մանկապարտեզների եւ դպրոցների ղեկավարներն էին: Հանդիպմանը խոսեցին կրթության ոլորտում առկա մարտահրավերների մասին, այդ թվում՝ նախարարը զրուցեց այն նորամուծությունների վերաբերյալ, որոնք ծրագրվում են ներդնել առաջիկայում: Նախարարը հայտարարեց, որ որակյալ կրթությունը եւ երիտասարդների զարգացումը կառավարության հոգատարության առաջնահերթություններից մեկն է եւ դրա համար անհրաժեշտ են արդի մոտեցումներ եւ նորարար մեթոդներ: Ինչպես նշեց Միխեիլ Չխենկելին, նախարարությունն ակտիվորեն գործում է ենթակառույցների արդիականացման եւ ուսումնական հաստատությունները նոր տեխնոլոգիայով համալրման ուղղությամբ:

Հանդիպմանն անդրադարձան մանկավարժական բուհի նշանակության եւ դրա զարգացման ուղղությամբ որոշակի բարեփոխումների անցկացման անհրաժեշտության հարցին: Հանդիպմանը Միխեիլ Չխենկելին խոսեց նաեւ կորոնավիրուսի համավարակի պայմաններում հեռավար ուսուցման ուղղությամբ իրականացվող, միջազգային գործընկերների կողմից դրական գնահատականի արժանացած նախագծերի մասին:

# ՍԱՄՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՃԱՆՈԹԱՆՈՒՄ Է ԸՆՏՐՈՂՆԵՐԻՆ ՀՈՒԶՈՂ ՀԱՐՑԵՐԻՆ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, «Վրացական երազանք» կառավարող կուսակցությունից Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի ընտրատարածքում մեծամասնական պատգամավորության թեկնածու առաջադրված Սամվել Մանուկյանը շարունակում է ակտիվ քարոզարշավը:*

Մասնավորապես, սեպտեմբերի 14-15-ին մեծամասնականի թեկնածուն, Ախալքալաքիի քաղաքապետ Յուրի Հունանյանի հետ միասին, եղավ մունիցիպալիտետի Մուրջախեթ, Չանդուրա, Վաչիանի, Գումբուրդո, Կիրովական գյուղերում, որտեղ ծանոթացավ իրականացվող ենթակառույցային նախագծերի, տեղացիների հետ քննարկեց առաջիկայում ծրագրված նախագծերի թեման: Միաժամանակ, տեղացիները պատգամավորության թեկնածուին ու քաղաքապետին մանրամասն տեղեկատվություն փոխանցեցին իրենց անհանգստացնող հարցերի մասին: Սամվել Մանուկյանը նշեց, որ ընտրություններում հաղթանակի դեպքում հնարավորինս կնպաստի դրանց կարգավորմանը:

# ՍՈՉԱՐ ՍՈՒԲԱՐԻ. «ՄԱՐԴԿԱՆՑ ՀՈՒԶՈՂ ԱՄԵՆԱԲԱՐԴ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆՆ Է»

Թբիլիսիի Սամգորիի ընտրատարածքում կառավարող կուսակցության կողմից առաջադրված մեծամասնական պատգամավորության թեկնածու Սոզար Սուբարին, քարոզարշավի շրջանակներում, հերթական հանդիպումն անցկացրեց Վարկեթիլիի եւ Երրորդ զանգվածի բաղամասերում: Բնակչության հետ հանդիպմանը նշվեց, որ տարածքում հիմնականում պահպանվել են դեռեւս խորհրդային ժամանակներում կառուցված բնակելի մասնաշենքերը, որտեղ անընդհատ հիմնախնդիրներ է ծագում՝ կապված վերելակների, ճանապարհների հետ, տեղացիներն առանձնակի մտահոգություն հայտնեցին կորոնավիրուսի համավարակով պայմանավորված բարդությունների կապակցությամբ: Շատերը նշեցին, որ ամենացավոտ հիմնախնդիրը գործազրկությունն է, եկամուտների աղբյուրի կորուստը: Պատգամավորության թեկնածուն հանդիպմանը խոսեց կառավարող թիմի նախընտրական ծրագրի մասին, նշելով, որ «Վրացական երազանքը» հնարավորինս կանի համավարակի պայմաններում մարդկանց թեկուզ նվազագույնով ապահովելու ուղղությամբ:

# ԳՈԳԻ ՄԵՇՎԵԼԻԱՆԻ. «ԾԱԼԿԱՅՈՒՄ ՇԱՏ ԲԱՆ Է ԱՐՎԵԼ, ԹԵՊԵՏ ԱՆԵԼԻՔՆԵՐՆ ԷԼ ՇԱՏ ԵՆ»

*«Վրացական երազանքից» Բոլնիսիի, Դմանիսիի, Ծալկայի եւ Թեթրիծղարոյի ընտրատարածքներից մեծամասնական պատգամավորության թեկնածու Գոգի Մեշվելիանին քարոզարշավի շրջանակներում այցելեց Ծալկայի մունիցիպալիտետ, եղավ Այազմա, Նարդեւան գյուղերում, հանդիպում ունեցավ տեղի երիտասարդների հետ:*

Նա տեղում ծանոթացավ մարդկանց հուզող հիմնախնդիրներին, ներկայացրեց իր հայեցակետը խորհրդարանի պատգամավոր ընտրվելու դեպքում, օրենսդիր մարմնի առջեւ տեղի մարդկանց ներկայացնելու հարցում: Նրա խոսքով, ընտրվելու դեպքում, իր առաջնահերթ խնդիրը կլինի կենտրոնական իշխանությանը հասցնել տեղացիներին հուզող խնդիրները եւ առավելագույնս նպաստել դրանց արագ կարգավորմանը: Գոգի Մեշվելիանին խոսեց նաեւ պետության կողմից գյուղատնտեսության ոլորտի խրախուսման համար նախատեսված ծրագրերի մասին, նշելով, որ դրանց իրականացումը զգալիորեն կանդրադառնա մարդկանց կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ իրականացվող քայլերին:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ԸՆՏՐԱԿԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՔԱԿԱՆՈՆԸ

*Հոկտեմբերի 31-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների կապակցությամբ, Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ընտրություններին մասնակից սուբյեկտների, քաղաքական կուսակցություններին առաջարկեց գործողության վարքականոն, որը սահմանում է ընտրությունների մասնակիցների վարքը նախընտրական քարոզաշավի փուլում:*

Կառավարող «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության եւ ընդդիմադիր մի շարք կուսակցությունների կողմից հավանության արժանացած եւ ստորագրած վարքականոնը նախատեսում է կուսակցությունների պարտավորությունները երկրի համար այդ վճռորոշ փուլում: Մասնավորապես, փաստաթուղթը ստորագրած կուսակցությունները համաձայնվել են, որ քարոզարշավի ընթացքում չեն օգտագործելու ատելության խոսք, այլատյացություն եւ սպառնալիք պարունակող հայտարարություններ, նպաստելու են խաղաղ ընտրական միջավայր ստեղծելուն, չեն դիմի բռնության եւ բռնության կոչերով հանդես չեն գա, չեն խանգարելու մրցակցի նախընտրական քարոզարշավի միջոցառումների ընթացքին եւ քարոզչական նյութեր տարածելուն, չեն օգտագործելու եւ կանխամտածված չեն տարածելու մրցակցի մասին ապօրինի ձեռք բերված տեղեկություն, ինչպես նաեւ չեն կեղծելու դրանք, չեն օգտագործելու կեղծ էջեր սոցիալական ցանցերում հասարակության վրա ազդեցություն գործելու համար, չեն օգտագործելու վարչական միջոցներ ընտրություններին առավելություն ձեռք բերելու համար, ՁԼՄ-ներին չեն տրամադրելու զրպարտչական եւ անհիմն լուրեր այլ քաղաքական սուբյեկտների եւ նրանց անդամների մասին:

ՆՈՐ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՑ

# ԱՍՊԻՆՁԱՅՈՒՄ ԲԱՑՎԵՑ ԹՎՈՎ 84-ՐԴ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

*Սեպտեմբերի 14-ին, Ասպինձայում, բացվեց Վրաստանի տարածքով թվով 84-րդ հասարակական կենտրոնը: Նորաբաց կենտրոնը սպասարկումներ կմատուցի Ասպինձայի եւ հարակից գյուղերի՝ Դամալայի, Իդումալիի, Օշիրիի, Ռուսթավիի, Իվերիի, Օրգորիի, Սաղուդաբելիի, Ճոբարեթիի, Չվելիի, Նիջգորիի, Սարոյի, Խիզաբավրայի, Թոկիի եւ մյուս բնակավայրերի շուրջ 14 հազար բնակչի:*

Նորաբաց կենտրոնը ի վիճակի է սպառողներին մատուցել պետական եւ մասնավոր հատվածի շուրջ 200 սպասարկում: Այն կգործի «Մեկ պատուհան» սկզբունքով: Այստեղ հնարավոր կլինի կարճ ժամանակահատվածում ստանալ անձնագրերը, անձնական վկայականները, իրականացնել անշարժ գույքի գրանցումը, ստանալ կադաստրային ծրագիրը, օգտվել արխիվային ծառայություններից եւ այլն: Նորաբաց կենտրոնը սպասարկումներ կիրականացնի նաեւ Վրաստանի կառավարության նոր «Պետությունը քո գործընկեր» նախագծի շրջանակներում: Ավելացնենք, որ երկրի տարածքով հարյուրից ավելի բնակավայրերում արդեն գործող 83 հասարակական կենտրոններում եւ իրավաբանական 24 տներում, այդ նպատակով արդեն գործարկվել է միացյալ էլեկտրոնային https:/programs.gov.ge/ հարթակը:

Նշենք, որ Ասպինձայում օրերս բացված հասարակական կենտրոնը Սամցխե-Ջավախեթիի երկրամասում թվով ութերորդն է: Նման կենտրոններ գործում են երկրամասի Փոկա, Վալե, Բարալեթի, Գումբուրդո, Բակուրիանի, Ածղուրի եւ Ադիգենի բնակավայրերում: Գործող եւ կառուցվող հասարակական կենտրոնների մասին տեղեկատվությունը ներկայացված է https://centri.gov.ge/ge/centers կայք-էջում:

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՃԻՇՏ Է»

***Սեպտեմբերի 16-ին, Հայաստանի ազգային ժողովում կառավարության անդամների հետ հարցուպատասխանի ժամանակ, Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ կառավարությունը կորոնավիրուսի դեմ պայքարի ռազմավարության առումով ամեն ինչ ճիշտ է արել, հանրությունից ոչինչ չի թաքցրել:***

- Հայաստանի կառավարությունը, ինչպես պարտավորվել էր, 100 տոկոսով թափանցիկ է եղել եւ շարունակում է թափանցիկ մնալ՝ կորոնավիրուսի հարցում: Ընդհանուր առմամբ, ամենակարեւոր ցուցիչը, որը պետք է նայենք, մեր օրական դրական դեպքերի տոկոսային հարաբերությունն է թեստերի հետ: Մենք այսօր արդեն բավական երկար ժամանակ հասել ենք մի տոկոսի, որ ամիս ու կես առաջ նույնիսկ չէինք կարող մտածել, որ կհասնենք այդ ցուցանիշին: Մեզ մոտ 5-6 տոկոսն են դրական դեպքերը՝ թեստերի թվի հետ համեմատած,- ասաց Նիկոլ Փաշինյանը:

## ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓԱԿՎԱԾ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ ԵՆ, ԲԱՑՎԵԼ Է 6600 ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂ

***Հայաստանում կորոնավիրուսի համավարակի ընթացքում փակված աշխատատեղերը վերականգնվել են, դրանից հետո կրկին ավելացում է արձանագրվել: Այդ մասին Ազգային ժողովի անդամների հետ հարցուպատասխանի ծեւաչափում հայտարարեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը:***

- Այդ վիճակագրությունը պաշտոնական, անհերքելի վիճակագրություն է: Եվ այդ հաշվետվությունները չեն կարող օդից լինել, քանի որ ամեն հաշվետվություն այդ հաշվետվությունը ներկայացնողի համար առաջացնում է ֆինանսական պարտավորություն, խոսքը եկամտահարկի հաշվետվությունների մասին է,- հայտարարեց Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետը նշեց, որ 2018-ից մինչեւ 2020 թվականը Հայաստանում հսկայական թվով աշխատատեղեր են ի հայտ եկել, բայց հնարավոր չէ հստակ ասել, թե որն է զրոյից սկսել գործել, որն է, որ ստվերում է գործել, հիմա տեղավորվել է հարկային դաշտ:

- 70 հազար աշխատատեղերի կրճատումը ապրիլ ամսին այն գործոններից մեկն էր, որը կանխորոշեց կորոնավիրուսի համատեքստում մեր հետագա գործողությունները,- ասաց նա:

Վարչապետը հայտնեց, որ ապրիլ ամսին աշխատատեղերի կրճատում է եղել, հետո թիվը վերականգվել է, հետո՝ աճել: Այդ աճը վերաբերում է 2020 թվականի օգոստոսին՝ 2019-ի համեմատ:

- Շատ կարեւոր է արձանագրել, որ մեր հակաճգնաժամային միջոցառումների մեջ առնվազն մի քանիսն ունենք, որոնց նպատակն է՝ խթանել աշխատատեղերի պահպանումը: Այն ընկերություններին, որոնք աշխատատեղերը եւ աշխատավարձային ֆոնդը չեն կրճատել, գրանտ ենք տալիս: Հույս ունեմ, որ օգոստոսի տվյալներն ավելի լավն են լինելու, որովհետեւ օգոստոսին մարզերում զբոսաշրջային ոլորտը աշխատել է բառիս բուն իմաստով ծանրաբեռնված,- ընդգծեց Փաշինյանը:

## ՌԻՍԿԻ ԽՄԲԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ԴԱՍԵՐԸ ԿՎԱՐԵՆ ՀԵՌԱՎԱՐ

***Հայաստանի հանրակրթական դպրոցների՝ կորոնավիրուսային հիվանդության ծանր ընթացքով զարգացման բարձր ռիսկային խմբի 1280 ուսուցչի տրվել է աշխատանքի կազմակերպման ընտրության հնարավորություն, այդ թվում՝ համապատասխան պայմանների դեպքում հեռավար ծեւաչափով աշխատելու տարբերակով:***

Վերոնշյալ խմբում դասավարների թիվը 202 է: Աշխատանքի չներկայացող ուսուցիչների դեպքում դպրոցը կարող է ներգրավել փոխարինող ուսուցիչների՝ առաջացած թափուր ժամերի մասով:

Բացի այդ, 2426 աշակերտի համար ուսումնական գործընթացը կկազմակերպվի կենտրոնացված հեռավար ձեւով՝ առաջնորդվելով հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգով:

«Հիշեցնենք, որ համաձայն Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության կանոնների՝ սովորողը կարող է չհաճախել դպրոց, եթե առկա է ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումը, երբ սովորողն ունի կորոնավիրուսային հիվանդության ռիսկի խմբի հիվանդություններից որեւէ մեկը՝ համաձայն Հայաստանի առողջապահության նախարարության սահմանած ցանկի, տանն առկա է կամ հայտնաբերվել է կորոնավիրուսային հիվանդության ախտանիշներով կասկածելի կամ հաստատված հիվանդ, տանն առկա է կորոնավիրուսային հիվանդության ռիսկի խմբի ընտանիքի անդամ, եւ առկա է համապատասխան ցուցում բժշկական հաստատության կողմից: Հավելենք, որ այս տարի Հայաստանի հանրակրթական դպրոցներում սովորելու է 397607 աշակերտ, իսկ առաջին դասարան է հաճախել 38186 աշակերտ»,- ասված է Հայաստանի կրթության եւ գիտության նախարարության հաղորդագրության մեջ:

## ԱՆՑԿԱՑՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՄՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

***Սեպտեմբերի 15-ին, Երեւանում, անցկացվեց Հայաստան-ԱՄՆ առեւտրի եւ ներդրումների համատեղ խորհրդի երրորդ առցանց նիստը:***

Նիստի ընթացքում քննարկվեցին Հայաստանի եւ ԱՄՆ միջեւ երկկողմ հետաքրքրություն ներկայացվող հարցեր աշխատանքի, առեւտրի տեխնիկական խոչընդոտների, ԱՄՆ-ի կողմից Հայաստանին տրամադրվող Արտոնությունների ընդհանրացված համակարգ (GSP) ծրագրի, ԱՄՆ ներմուծման սանիտարական եւ բուսասանիտարական պահանջների, ԱՀԿ շրջանակներում ընթացող բանակցությունների, առեւտրային դիվանագիտության ոլորտում համագործակցության, ինչպես նաեւ COVID-19-ի առնչությամբ ոլորտային համագործակցության հնարավոր ուղղությունների եւ այլնի վերաբերյալ:

Հայաստան-ԱՄՆ առեւտրի եւ ներդրումների համատեղ խորհուրդը հիմնվել է 2015թ. մայիսի 7-ին Հայաստանի կառավարության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջեւ ստորագրված առեւտրի եւ ներդրումների շրջանակային Համաձայնագրով:

Հայաստանի առեւտրաշրջանառությունը Միացյալ Նահանգների հետ 2019 թվականին կազմել է 334.23 մլն ԱՄՆ դոլար, ինչը, նախորդ տարվա համեմատ, աճել է 47.8 տոկոսով (2018 թվականին կազմել է 226.06 մլն ԱՄՆ դոլար):

## 5-ՕՐՅԱ ՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ՝ ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ՀԱՅՐԵՐԻՆ

***Սեպտեմբերի 16-ին, Հայաստանի ազգային ժողովը, երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց «Իմ քայլը» խմբակցության մի քանի պատգամավորների կողմից ներկայացված օրենքի նախագիծը, որով, մասնավորապես, սահմանվում է հայրության արձակուրդ:***

Հայաստանի աշխատանքային օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծն ընդունվեց՝ խորհրդարանում ստանալով 116 «կողմ», 1 «դեմ» ձայներ:

Նշվեց, որ նախագիծը հնարավորություն է տալիս նորածինների հայրիկներին, երեխայի ծնվելուց հետո, 30 օրվա ընթացքում, օգտվել 5 աշխատանքային օրվա վճարվող արձակուրդից: Նախագիծը նաեւ ավելի պաշտպանված է դարձնում մինչեւ մեկ տարեկան երեխա խնամող անձանց աշխատանքային իրավունքները: Սահմանվել է, որ երեխային փաստացի խնամող՝ արձակուրդում չգտնվող անձի՝ մինչեւ մեկ տարեկան երեխա խնամելու ամբողջ ժամանակահատվածում աշխատանքի էական պայմանները չեն կարող փոփոխվել նվազ բարենպաստ պայմանների, բացառությամբ պաշտոնի անվանման եւ (կամ) տարակարգերի:

### 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱԽՄԱՌ ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ԿՆՎԱԶԻ ՉՈՐՍ ՏՈԿՈՍՈՎ

***Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) կանխատեսում է, որ Հայաստանի համախառն ներքին արտադրանքը (ՀՆԱ) 2020-ին կնվազի 4 տոկոսով՝ նախկինում կանխատեսված 3,5 տոկոսի փոխարեն, միաժամանակ 2021 թվականի համար կանխագծելով ՀՆԱ-ի 3,5 տոկոս աճ:***

***COVID-19-ի պայմաններում մեկ տարի առաջ գրանցված 7 տոկոսի Հայաստանի տնտեսական աճը դադարեց՝ այս տարվա առաջին կեսին կրճատվելով 5.7 տոկոսով: Հայաստանի համար գնաճի կանխատեսումը ապրիլի 2.8 տոկոսից իջեցվել է 1.4 տոկոսի այս տարի՝ պայմանավորված ներքին եւ արտաքին թույլ պահանջարկով, նավթի ցածր գնով եւ բավական կայուն փոխարժեքով:***

### ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՇԵՄԸ ԲԱՐՁՐԱՑՎՈՒՄ Է

***Հայաստանի ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց օրենքի նախագիծը, որով առաջարկվում է բարձրացնել ավանդների այն չափը, որի վերադարձը երաշխավորվում է:***

***«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծն Ազգ նիստում ստացավ 117 «կողմ» ձայն:***

***Նախագծով սահմանվում է՝ եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը 16 միլիոն հայկական դրամ է՝ գործող 10 մլն դրամ շեմի փոխարեն: Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը 7 միլիոն ՀՀ դրամ է, գործող շեմը 5 մլն դրամ է:***

### ԷՐԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՆՈՐ «ՍԻՐՈ ՊԱՆԴԵՄԻԱ» ԱԼԲՈՄԸ

***Չնայած համավարակի տարածմանը, որը մեծ վնասներ հասցրեց՝ ինչպես այլ ոլորտներին, այնպես էլ մշակույթին, շատ ստեղծագործողներ չդադարեցին աշխատել եւ շարունակեցին նոր գործեր գրել, որոնք սիրով են ներկայացնում հանրությանը: Նրանցից է երգիչ, ծնունդով թբիլիսցի Էրիկ Կարապետյանը, որն այս դժվարին պայմաններում իր երկրպագուների դատին է հանձնում «Սիրո պանդեմիա» ալբոմը:***

### ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԻ ՄԻ ՄԱՍԸ ԱՐԳԵԼԱՆՔԻՑ ԱԶԱՏՎԵԼ Է

***Սեպտեմբերի 15-ին, Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը մասնակի բավարարեց Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գույքի վրա դրված արգելանքը վերացնելու մասին պաշտպանների միջնորդությունը՝ Քոչարյանի գույքի որոշակի մասն ազատվել է կալանքից:***

***Դատարանը նման որոշում է կայացրել դռնփակ ռեժիմով ընթացող դատական նիստի ընթացքում:***

***Դատարանը դռնփակ ռեժիմով քննում էր Ռոբերտ Քոչարյանի գույքի վրա դրված արգելանքի վերացման միջնորդությունը: Դատարանը պահանջել էր արգելանքի տակ գտնվող գույքի եւ բանկային հաշիվների վերաբերյալ ամբողջական տեղեկություն տրամադրել: Նախորդ նիստին պաշտպանները ներկայացրել են պահանջված տեղեկանքները:***

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ՍԵՊՏԵՄԲԵՐ

*20.09.2020* Բարեկենդան Վարագա Սուրբ Խաչին

*22.09.2020* Սուրբ Կույսեր Փեփրոնեի, Մարիանեի եւ Մեծ Վարդանի դստեր՝ Շուշանի հիշատակության օր

*26.09.2020* Սուրբ Գեւորգ քաջամարտիկ զորավարի, Ադոկտոսի եւ Ռոմանոս երգեցողի հիշատակության օր

## ՇՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱՎՈՐ, ԱՐԱՅԻԿ

*Ճիխարուլա եւ Բալանթա գյուղերի բնակիչներս ջերմորեն շնորհավորում ենք մեր սիրելի, երկու գյուղերից արդեն երկրորդ անգամ Բորժոմիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավոր ընտրված, շնորհալի եւ արդեն իսկ վստահություն ձեռք բերած երիտասարդ գործչին՝ Արայիկ Անտոնյանին՝ ծննդյան 30-ամյակի առիթով, մաղթում քաջառողջություն, երջանկություն եւ ձեռքբերումներով հարուստ կենսուղի:*

***«Վրաստան» թերթի խմբագրությունը սիրով միանում է հնչող շնորհավորանքներին եւ բարեմաղթանքներին:***

## ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

# ԴԵՂԻՆ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ ՏԱՐԵՎԵՐՋ ԿՀԱՆՎԵՆ ԹԲԻԼԻՍԻԻ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻՑ

***Մինչեւ ընթացիկ տարվա դեկտեմբեր, Թբիլիսիի դեղին ավտոբուսները կփոխարինվեն բնապահպանական անվտանգության խիստ նորմերին համապատասխանող տրանսպորտով՝ խոստանում է քաղաքապետ Կախա Կալաձեն:***

Ըստ քաղաքապետի՝հասարակական տրանսպորտային պարկի նորացման նպատակը ավտոբուսային ցանցը առավել հասանելի դարձնելն է, դրանում մայրաքաղաքի բոլոր հիմնական թաղամասերի ներառումը եւ, միաժամանակ, տրանսպորտային քաղաքականությունն ուղղված է Թբիլիսիում օդի աղտոտվածության եւ խցանումների խնդրի լուծմանը:

Հիշեցնենք, որ Թբիլիսիի քաղաքապետարանը ավելի քան 2 տարի է, ինչ շարունակում է մունիցիպալիտետային ավտոպարկի թարմացման գործընթացը: Դեռեւս երկու տարի առաջ լայնորեն ներկայացված ծրագրի արժեքը մոտ 110 մլն. լարի է (36 մլն. դոլար): Նշենք, որ մայրաքաղաքում տրանսպորտային բարեփոխումների գործընթացին աջակցում են Ասիական զարգացման բանկը, ինչպես նաեւ՝ Եվրոպական զարգացման եւ վերակառուցման բանկը: Միջազգային ֆինանսական այդ մարմինները պատկառելի վարկեր են տրամադրում նոր ավտոբուսների գնման համար, նաեւ օգնում են քաղաքի համար ընդհանուր տրանսպորտային պլան կազմելու եւ ավտոբուսային ցանցերի զարգացման հարցում:

## ՖՈՒՏԲՈԼ

# ՀԻԱՆԱԼԻ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ՝ ԹԲԻԼԻՍԻԻ «ԴԻՆԱՄՈՅԻՑ» ՈՒ «ԼՈԿՈՄՈՏԻՎԻՑ» ԵՎ ԵՐԵՎԱՆԻ «ԱՐԱՐԱՏ-ԱՐՄԵՆԻԱՅԻՑ»

***Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի եւ Հայաստանի երեք թիմեր, սեպտեմբերի 17-ին, անդրանիկ հանդիպումներն անցկացրին ՈՒԵՖԱ-ի Եվրոպայի լիգայի որակավորման երկրորդ փուլում:***

Թբիլիսիի «Դինամո» Ուելսի Ռեկսել քաղաքում՝ 1:0 հաշվով առավելության հասավ տեղի «Քոնազ Քի Նոմեդս» ակումբի հետ մենամարտում: Որակավորման փուլ իրենց առաջին արգելքը հաջողությամբ հաղթահարեցին նաեւ Թբիլիսիի «Լոկոմոտիվը» եւ Երեւանի «Արարատ-Արմենիան», ընդ որում, թբիլիսցիները սեփական դաշտում՝ 2:1 հաշվով պարտության մատնեցին Ռուսաստանի, կարելի է ասել ամենահեղինակավոր եւ ամենահարուստ ակումբին՝ Մոսկվայի «Դինամոյին»: Որակավորման երկրորդ փուլում բավական տարօրինակ ընթացք ունեցավ «Արարատ-Արմենիա»-Լյուքսեմբուրգի «Ֆոլա էշ» ակումբի հանդիպումը: Երեք 11 մետրանոց տուգանային հարվածներով, երկու թիմերում կարմիր քարտերով հեռացված մեկական ֆուտբոլիստներով դրամատիկ այդ հանդիպման բախտը որոշվեց հիմնական ժամանակի վերջին րոպեներին, երբ 1:3 հաշվով պարտվող «Արարատ-Արմենիան», երկու տուգանային հարվածով կարողացավ վերականգնել հավասարակշռությունը, իսկ մրցավարի կողմից նշանակված երրորդ խաղափուլի կեսերին՝ խփել հաղթական գոլը:

Այսպիսով, մեր երեք թիմերը, հաղթահարելով Եվրոպայի լիգայի որակավորման երկրորդ փուլի առաջին արգելքը, կշարունակեն պայքարը պատվավոր գավաթի համար:

# ԱՌԱՋԸՆԹԱՑ ՖԻՖԱ-Ի ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

***Վրաստանի եւ Հայաստանի հավաքականները, Ազգերի լիգայի որակավորման երկրորդ փուլում, իրենց «C» խմբում բավական հաջող հանդես եկան:***

Երկու հանդիպումներից հետո իրենց ակտիվում գրանցելով, համապատասխանաբար, 4 եւ 3 միավոր (Վրաստանի թիմը 1:0 հաշվով մրցակցի դաշտում հաղթեց Էստոնիայի թիմին, իսկ սեփական հարկի տակ՝ 1:1 ավարտեց հանդիպումը Հյուսիսային Մակեդոնիայի հետ, իսկ Հայաստանի հավաքականը առաջին հանդիպումում մրցակցի դաշտում 1:2 հաշվով զիջեց Հյուսիսային Մակեդոնիային, իսկ սեփական դաշտում 2:0 հաշվով առավելության հասավ Էստոնիայի հավաքականի նկատմամբ): Ազգային ընտրանիների հաջող ելույթը անմիջականորեն անդրադարձավ ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի (ՖԻՖԱ) կողմից հավաքականներին տրվող վարկանիշային միավորների վրա:

ՖԻՖԱ-ի կողմից հրապարակված վարկանիշային նոր աղյուսակում Վրաստանի հավաքականը առաջադիմելով երկու հորիզոնականով եւ ներկայում հանգրվանեց 89-րդ տեղում: Աղյուսակում իր դիրքերը բարելավեց նաեւ Հայաստանի հավաքականը: Առաջադիմելով մեկ հորիզոնականով Հայաստանի ազգային ընտրանին զբաղեցրեց 101-րդ տեղը:

Ինչ վերաբերում է վարկանիշային աղյուսակի առաջին տասնյակին, ապա այն, նախորդի համեմատությամբ, որոշակի փոփոխության է ենթարկվել: Առաջին չորս տեղերը շարունակում են զբաղեցնել Բելգիայի, Ֆրանսիայի, Բրազիլիայի եւ Անգլիայի հավաքականները: 5-րդ տեղում Պորտուգալիայի թիմն է, որը մինչ այդ 7-րդն էր, մեկ աստիճանով նահանջել է Ուրուգվայի թիմը, նույնքան միավորով առաջադիմել է Իսպանիայի հավաքականը: 8-րդը Խորվաթիայի ընտրանին է: Լավագույն տասնյակը եզրափակում են Արգենտինայի եւ Կոլումբիայի հավաքականները:

«Վրաստան» թերթի խմբագրակազմը, Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը խորապես ցավակցում են Վրաստանի հայ գործարարների միության նախագահ Սամվել Աղեկյանին, սիրելի մոր՝

***Էմմա Միսակի ԱՂԵԿՅԱՆԻ***

մահվան կապակցությամբ եւ ցավակցում հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:

# ԽԱՉԲԱՌ



**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 1.Անկուշտ, ագահ: 8.Իր: 9.Հյուսիսային բեւեռի շրջակայքը: 10.Բանկային գործողություն: 13.Ծուռումուռ գրերի ամբողջությունը: 17.Ոտքի նեղ ճանապարհ, արահետ: 18.Կրակից ստացած վերք: 21.Իղձ, տենչանք: 24.«Մեզի, ... մեծ ավետիս»: 25.Ճապոնական ռազմական արվեստ: 27.Ձվալ: 29.Թաց, խոնավ: 31.Թանկագին քար: 34.Ջիու թեթեւ ու համաչափ ընթացք: 35.ԱՄՆ խորհրդարան: 36.Շնչելու օրգան: 37.Հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող ազգ: 38.Կինոդերասանուհի Ումա ...: 39.Կապիկի տեսակ: 42.Ընտիր: 43.Վրացական պրոֆեսիոնալ վոկալային արվեստի հիմնադիրներից ... Սարաջիշվիլի: 44.Նոնա Գափրինդաշվիլի, մարզաճեւ: 45.Էգ ձի: 48.Խմում են հիվանդության ժամանակ: 49.Վրացական ազգային պանրի տեսակ: 50.Վաղեմի, անցած: 51.... եւ Պոժարսկի:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 2.Անգլիայի, Շոտլանդիայի եւ Իռլանդիայի թագավոր 1625 թ-ից՝ ... I Ստյուարտ: 3.Պարսկահայոց ամսագիր: 4.Օղապարան: 5.Շրթունք: 6.Միտքը չկենտրոնացած: 7.Միջնադարյան ֆեոդալական տիտղոս Արեւմտյան Եվրոպայում: 11.Ինքնիշխան պետություն Հարավարեւմտյան Ասիայում՝ Արաբական թերակղզու վրա: 12.«Լեռ» ուղտի մեջքին: 14.Փափուկ հենարան գլխի տակ դնելու համար: 15.Վտանգի կոչ: 16.Արմատ (ժող.): 19.Գրական ժանր: 20.Շրջանակ, շրջագիծ: 21.Գետինը մաքրելու շոր: 22.Կողպեք: 23.Խորհրդային եւ ռուսական թատրոնի եւ կինոյի դերասան Ջինովի ...: 26.Թաղամաս Երեւանում: 28.Բանտ: 30.Հայ փիլիսոփա եւ գիտնական: 32.Հանցանքին թողություն խնդրելու բացակայություն: 33.Քարթլիի (Իբերիա) թագուհի: 37.Ծալկայի շրջանի Այազմա գյուղում ծնված հայ գուսան: 39.Մոմապատում: 40.Թումանյան, «Շունն ու ...»: 41.Դարձյալ, նորից: 46.Պոչ: 47.Հայաստանի միջնադարյան մայրաքաղաքներից:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 1.Վաղարշապատ: 9.Հայկ: 12.Արար: 13.Արարատ: 14.Շարա: 15.Շերամ: 16.Իմ: 17.Սմբակ: 19.Բեռն: 20.Ոլոռ: 23.Իսկ: 24.Անապակ: 29.Չադ: 30.Տերյան: 34.Աքրա: 36.Ապագա: 38.Անրի: 39.Չքնաղ: 40.Ալի: 42.Նաղաշ: 44.Ազատ: 47.Արազ: 48.Ակնա: 50.Կանաչ: 52.Հո: 53.Առ: 55.Առարկա: 57.Առկա: 58.Ներկա: 59.Արի: 60.Ուռեկի: 61.Գագրա: 62.Ագապի:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.Վաշտ: 2.Արա: 3.Ղարիբ: 4.Արամե: 5.Շուշանիկ: 6.Պարսիկ: 7.Արամ: 8.Տամբով: 9.Հայկո: 10.Ատ: 11.Կորյուն: 18.Ալ: 21.Ռա: 22.Բառ: 25.Աչք: 26.Պարանա: 27.Ադան: 28.Կյանք: 31.Ապա: 32.Նաղարա: 33.Փարիզ: 35.Սիփան: 37.Սունդուկյան: 39.Չկա: 41.Լաչակ: 43.Շահանե: 45.Ձավակ: 46.Տկար: 47.Անգարա: 49.Կորեկ: 51.Հանում: 54.Ռաբաթ: 56.Կրիա: 59.Ագի:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445